նեցու վկայաբանության մեջ Պռոշի համար գրում է «կարգեալ հազարապետ Հայոց», անշուշտ Իվանեի և ապա Ավագի կողմից։ Պռոշի որդին՝ Ամիր - Հասան Ա., «մեծ սպարապետ» էր «տանն Ավագին որդւոյ Իւանէ աթաբակին»։

Վասակ Խաղբակյանը որքան քաջ էր իբրև զինվորական, նույնքան և ավելի նշանավոր էր որպես շինարար և բարեպաշտ իշխան. նորա շինարարական և գեղարվեստական ճաշակի արդյունքն է Կեչառվաց վանքի Կաթուղիկե անունով յեկեղեցին, որ մինչև այժմ էլ յուր վայելչությամբ, գողտրիկ տեսքով հիացմունք է պատճառում նայողին (պատկ. 23). ափսոս միայն ընկած է գմբեթի վեղարը Թմբուկի կես մասի հետ։ Կարծում ենք, թե հնարավորություն ունինք հայտնելու նաև ճարտարապետի անունը. յեկեղեցու արևելահյուսիսային կողմը կանգնած է մի խաչքար, յերեսը դեպի արևմուտք դարձրած, բարձր պատվանդանի վերա. առաջին յերեսի վերա գրված է* **«Զվեցիկ վարդպետ յաղաւթս յիշես / ջիք ի քս աղաչեմք»** *(պատկ. 24)։ Իսկ խաչքարի յետևը քանդակված է մի ուրիշ մեծ արձանագրություն, որ մանրամասնություններ է տալիս նորա մասին.*

> **Յիշեսջիք յաղաւթս / զծառայն այ(աստուծոյ) զՎեցիկ / քարագործ, որ շինեաց զն / որ եկեղեցիս եւ ի կատարման / սորին, ինքն կատարեաց զկեն/ցաղս եւ փոխեցաւ առ քս կիսաւրեայ աւուրքք եւ ես Յովաննէս եւ եղբարքս իմ / հարազատ սորին կանգնե/ցաք զսբ նշանս քսի ի վ/երայ հանկստարանի սորին առ / ի բարեխաւսութի սմա եւ մ / եզ եւ ամենայն հաւատա/ցելոց եւ յիշողացն զ/սա**.**

Վոչ առաջի և վոչ յետևի յերեսների արձանագրությունները թվական չունին. ուստի և հարց կարող է ծագել, թե վո՞րն է Վեցիկ «վարդպետի» շինած յեկեղեցին։ Վեցիկի խաչարձանը յուր բոլոր ճարտարապետական—քանդակագործական և հնագրական նշաններով ամենավաղը ԺԲ. դարու վերջերի կամ ԺԳ.-ի սկզբի գործ է. ապա, ուրեմն, խոսք կարող է լինել միայն յերկու յեկեղեցու մասին՝ Վասակաշեն կաթուղիկեի և սորա ու Գրիգոր Մագիստրոսի մեծ տաճարի մեջ ընկած Ս. Նշանի մասին (տես պատկ. 23., մեր պատկերի մեջ յերևում է միայն նորա մի փոքրիկ մասը յերկու լուսամուտով)։ Սուրբ նշանը նույնպես շինության*



Վեցիկի խաչքարը. **Պատկեր 24.**

թվական չունի, բայց սորա ծագումը ավելի նոր չէ, քան ԺԲ. դարու կեսերը. վորովհետև հարավային պա-

---

նորա (Վասակայ որդւոյ Վահրամայ) է զփող և զիշխանութիւն»։ Յերկու յեղբայրները ժամանակավորապես փախել եյին Կարին, Վրաց Գէորգի Գ. թագավորի վրեժխնդրությունից վախենալով (Ալիշ. Հայապ. 390)։ Բուրդը հետո Գեորգիի ամենամեծ աջակիցը դարձավ, ինչպես տեսանք Որբելյանների ապստամբության ժամանակ (տ. Ա. գլ. էջ. 6)։ Նույն Գոշ Մխիթարը յուր Դատաստանագրքի մեջ (յեր. 312) ավելի է պարզում այս խնդիրը. ինչպես թագավորն է պատերազմ գնում յուր «դրօշիւք եւ փողովք», այնպես էլ «իշխանք ինքեանց դրօշիւք եւ փողովք իցեն», յեթե թագավորը չլինի հետները։ «Փողս եւ դրօշս տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի լիցի»։

* *Տարաբաղդաբար պատկերը ի հակառակեն (թարս) է հանված. դեպի աջ ընկած շենքերը գտնվում են յեկեղեցու հյուսիսային կողմը. կաթուղիկեի հարավային ճակատը դեպի ձախ է ընկել աջի փոխարեն, նկարված է հարավ—արևմտյան կողմից։ Տես. Ազգ. Հանդ.* XXII. *սկզբի առաջին և իններորդ պատկերները։*

** *Ընդգծվածները միացած են։*

* *Տես Ազգ. Հանդ.* XXII *1912. № 1. առաջին, յերկրորդ, հինգերորդ և տասնումեկերորդ պատկերները գրքի սկզբում։*